ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՇԱՎԻՐ ԱՐԱՄԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՐՄԿԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ XVII-XVIII ԴԱՐԵՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԻՉՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Է. 00.02. «Ընդհանուր պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2002

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի ընդհանուր պատմության ամբիոնում:

Գիտական ղեկավար՝
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. Վ. Ա. Դիլոյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. Վ.Ա.Բայբուրդյան
Պատմական գիտությունների թեկնածու Ք.Պ.Կոստիկյան

Առաջատար կազմակերպություն՝
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ընդհանուր պատմության ամբիոն:

Պաշտպանությունը կայանալու է 2002թ. հոկտեմբերի 7-ին ժամը 14-ին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի 006 մասնագիտական խորհրդում (Հասցեն՝375019, Երևան, Մարշալ Բաղրամյանի, պող. 24գ):

Ատենախոսությունը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2002թ. սեպտեմբերի 7-ին

Մասնագիտական խորհրդի քարտուղար՝
պ.գ.թ. Ս.Բաղդասարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Արդի ժամանակաշրջանում հայ-պարսկական հարաբերությունները թևակոխել են զարգացման նոր փուլ, որը գնալով ձեռք է բերում նոր ձև ու բովանդակություն: Հայաստանի երրորդ հանրապետության ստեղծումից հետո (1991) երկու ժողովուրդների փոխհարաբերություններում արձանագրվեցին բարեկամության, փոխադարձ վստահության և փոխշահավետ համագործակցության բազմաթիվ հիշարժան էջեր: Հայաստանի Հանրապետության ու Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքական փոխհա՛րաբերությունները խարսխված են երկու ժողովուրդների դարավոր բարեկամության ամուր պատմական հիմքի վրա:

Հայ-պարսկական կապերը իրենց արմատներով գնում են դարերի խորքը: Այս հետնախորքի վրա էլ այսօր շարունակում են զարգանալ երկու հարևան պետությունների քաղաքական ու տնտեսական հարաբերությունները:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Պարսկաստանում տեղի ունեցած իրադարձությունները չէին կարող իրենց արտացոլումը չգտնել հայկական աղբյուրներում: Հիշյալ աղբյուրներում ամփոփված բավականաչափ հարուստ փաստական նյութը նպաստում է տվյալ դարաշրջանի Պարսկաստանի պատմության ամբողջական ուսումնասիրությանը: Շահաբասյան բռնագաղթը, պարսից արքունիքի վարած քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ չէր կարող վրիպել հայ պատմիչների ուշադրությունից: Հիմնականում մենք ելակետ ենք ընդունել XVII-XVIII դարերի հայ պատմիչների աշխատությունները, քանի որ դրանք գրվել են նկարագրվող իրադարձությունների ժամանակակիցների և ականատեսների կողմից:

Պարսկաստանի և պարսիկ ժողովրդի մասին Հայաստանում գրվել են և դեռ կգրվեն բազում աշխատություններ, քանզի հայ ժողովուրդը առ այսօր էլ մեծ ուշադրություն է դարձնում բարեկամ ու հարևան երկրի պատմության էջերի ուսումնասիրության վրա:

Մենք փորձել ենք անդրադառնալ Պարսկաստանի պատմության ընդամենը մի փոքրիկ ժամանակահատվածին, որն իր անմիջական ազդեցությունն է ունեցել Հայաստանի թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական կացության վրա:

Տվյալ դարաշրջանի Պարսկաստանի պատմության ուսումնասիրության վերաբերյալ գոյություն ունեցող հարուստ նյութը դեռևս լիովին ուսումնասիրված չէ: Մեր կողմից այս ուսումնասիրությունը մի համեստ փորձ է այդ ուղղությամբ: Թե՛ հայկական աղբյուրները, թե՛ արդեն վաղուց գիտական շրջանառության մեջ դրված նյութերը համարվում են Պարսկաստանի պատմության ուսումնասիրության համար խիստ կարևոր սկզբնաղբյուրներ: Այդ նյութերը լայն հնարավորություն են ընձեռում լուսաբանել Պարսկաստանի պատմության առանցքային հարցերը, որոնք առ այսօր շարունակում են մնալ հրատապ և ներկայացնում են գիտական մեծ հետաքրքրություն:

Հարկ է նշել, որ այդ աղբյուրները լինելով հայ իրականության արգասիքը, շատ դեպքերում չեն կարող անաչառ լինել, մանավանդ երբ խոսքը վերաբերում է հայ ժողովրդի ճակատագրին: Բայց, միաժամանակ և ամենակարևորը,նրանք իրենց ուշադրության կենտրոնում են պահում ռազմա-քաղաքական հիմնական իրադարձությունները: XVII դարում դեռ շարունակվում էին թուրք-պարսկական պատերազմները, որոնք աղետաբեր հետևանքներ ունեցան Հայաստանի համար: Սեֆևիները, առաջ քաշելով պարսկական երբեմնի հզոր տերության վերականգնման անհրաժեշտության գաղափարը ձգտում էին առավելության հասնել Օսմանյան Թուրքիայի նկատմամբ: Նման քաղաքականությունը բնականաբար բացասաբար էր անդրադառնում Հայաստանի ներքին ու արտաքին դրության վրա: Հայաստանի հարցում Պարսկաստանը կանգնած լինելով նվաճողական քաղաքականության դիրքերում, այնուամենայնիվ հաշվի էր առնում հայ ավագանու և եկեղեցու շահերը:

Հայ պատմիչները հիմնականում լինելով հոգևորականներ, բարձր են դասել եկեղեցու շահերը, բայց նյութերի հավաստիությամբ և անաչառությամբ նրանք կարողացել են հստակ կերպով ներկայացնել նաև ժամանակի ռազմա-քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրական պատկերը: Այս արժանիքները մեզ հիմք են տալիս վստահաբար մոտենալ նշված աղբյուրների հաղորդումներին:

Հայկական աղբյուրները զայրույթով են խոսում Սեֆյան շահերի քաղաքականության մասին, որի հետևանքով մարդաթափ եղավ Հայաստանը և ստվարացավ պարսկահայ գաղթօջախը, որտեղ հատկապես առանձնանում է Նոր Զուղան: Պարսկահայ գաղթօջախների հասարակական-քաղաքական կյանքը, որը Պարսկաստանի պատմության մի մասն է կազմում, գիտական հետաքրքրություն է ներկայացնում թե՛ Պարսկաստանի, և թե՛ Հայաստանի պատմության ուսումնասիրության համար: Միաժամանակ պետք է նշել, որ այդ երկու երկրների փոխհարաբերությունների պատմությունը ընթացել է միջազգային հարաբերությունների լայն հետնախորքի վրա և ընդգրկում է Պարսկաստանի ու Հայաստանի ներքին ու արտաքին բնագավառներին վերաբերող հիմնահարցերը:

Մեր ուսումնասիրության առարկան հանդիսացող XVII-XVIII դարերը Պարսկաստանի պատմության մեջ լեցուն են վերելքներով ու վայրէջքներով: Ծանր դրության մեջ հայտնված Սեֆյան հարստությունը ուղիներ էր փնտրում ստեղծված վիճակից դուրս գալու համար:Այդ հողի վրա 1603թ. սեպտեմբերին բռնկվեց թուրք-պարսկական հերթական պատերազմը: Այս անգամ նախահարձակը Պարսկաստանն էր:

Երկու մրցակից պետությունների բախումը պայմանավորված էր նվաճողական քաղաքականությամբ: Այդ ծրագրերն առաջին հերթին ուղղված էին Անդրկովկասի և մանավանդ Հայաստանի դեմ:

Դարեր շարունակ Հայաստանը վեր է ածվել ռազմական գործողությունների թատերաբեմի, որոնց միջոցով երկու թշնամի պետությունները փորձում էին լուծել Մերձավոր Արևելքում գերիշխանություն հաստատելու խնդիրը:

Այսօրվա պայմաններում, երբ հայ-պարսկական հարաբերությունները ապրում են անկասելի զարգացում, բնականաբար մեծանում է մեր ժողովրդի հետաքրքրությունը Պարսկաստանի պատմության հարցերի նկատմամբ: Այս պարագայում անշուշտ անգնահատելի է հայկական աղբյուրների դերն ու նշանակությունը, որոնք լույս են սփռում մի շարք կարևոր հարցերի պարզաբանման վրա Դրանք միաժամանակ առաջ են բերում նոր հարցադրումներ, որոնք անհրաժեշտ է ենթարկել համակողմանի ուսումնասիրության: Պարսկաստանի պատմության հարցերի արծարծումը հայկական աղբյուրներում օրինաչափ երևույթ է: Այդ առումով

պետք է նկատի ունենալ, որ երկու երկրների հարաբերությունների զարգացման հետնախորքի վրա խիստ արդիական հնչողություն են ստանում այնպիսի հարցեր, ինչպիսիք են Սեֆյան տերության հզորացման ու անկման, միջցեղային բախումների և նրանց հետևանքների, հայ-պարսկական կապերի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ու քաղաքական բնագավառներին վերաբերող հարցերը: Վերոհիշյալ բոլոր հարցերը այս կամ այն չափով արտացոլված են XVII-XVIII դարերի հայ պատմիչների երկերում, որոնց ուսումնասիրությանն էլ նվիրված է սույն ատենախոսությունը:

Հաշվի առնելով, որ ներկայումս Պարսկաստանը Միջին Արևելքի ամենախոշոր պետություններից մեկն է և զբաղեցնում է առաջնակարգ ռազմավարական դիրք Պարսից ծոցի, Հնդկական օվկիանոսի և Կասպից ծովի ավազաններում, բնականաբար այդ երկրի պատմության ուսումնասիրումը դառնում է այժմեական: Պարսկաստանը միաժամանակ Հայաստանի հարևան երկիրն է, որի պատմությունը սերտորեն շաղկապված է Հայաստանի պատմության հետ: Հաշվի առնելով այս պարագան և կարևորելով տարածաշրջանի և համաշխարհային քաղաքականության մեջ Պարսկաստանի իբրև բավականին ազդեցիկ գործոնի նշանակությունը, կարծում ենք, որ թեմայի ընտրությունը այս տեսանկյունից դառնում է խիստ արդիական: Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև ներկայումս ընթացող հայ-պարսկական հարաբերությունների զարգացման գործընթացով:

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ:

Ատենախոսության հիմնական նպատակն է վերլուծել Պարսկաստանի ներքին ու արտաքին դրությունը XVII-XVIII դարերի հայկական աղբյուրների լուսաբանմամբ: Բացահայտել այդ աղբյուրների կարևորությունը, որպես Պարսկաստանի պատմության ուսումնասիրման սկզբնաղբյուր:

Լուսաբանել հայ-պարսկական փոխհարաբերությունները և նրանց զարգացումը: Ցույց տալ Պարսկաստանում տեղի ունեցած իրադարձությունների հետևանքները թե՛ Պարսկաստանի և թե Հայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կացության զարգացման վրա:

Ցույց տալ այն նախադրյալները, որոնցով պայմանավորված էր XVII-XVIII-րդ դարերի Պարսկաստանի պատմության ընթացքը:

3. ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ:

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը կազմում են պատմահամեմատական մոտեցումը և հիմնահարցերի աղբյուրագիտական վերլուծությունը: Հեղինակը լայնորեն օգտագործել է տարբեր տեսակետների և խնդիրների լուծման նկատմամբ տարբեր մոտեցումների համադրումը՝ հենվելով սկզբնաղբյուրների և մասնագիտական գրականության տվյալների վրա:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ:

Ատենախոսության թեման այս կտրվածքով առաջին անգամ է դառնում գիտական ուսումնասիրության առարկա: Նրանում համակողմանիորեն վերլուծության են ենթարկվում XVII-XVIII դարերի հայկական աղբյուրները և բացահայտվում նրանց հաղորդումների կարևորությունը Պարսկաստանի պատմության ուսումնասիրության բնագավառում: Թեմայի գիտական նորույթը կայանում է նաև նրանում, որ առաջին անգամ ուսումնասիրության առարկա են դառնում XVII-XVIII դարերի հայկական աղբյուրներն ամբողջությամբ վերցրած՝ Պարսկաստանի պատմության ուսումնասիրության տեսանկյունից: Ուսումնասիրության առարկա են դարձել նաև տվյալ ժամանակաշրջանի հայ-պարսկական հարաբերությունները: Թեմայի գիտական նորույթը կայանում է նաև նրանում, որ վերոհիշյալ բոլոր հարցերը ներկայացվում են հայ-պարսկական հարաբերությունների պատմության հետ շաղկապված: Թեման կարևոր է և մեծ հետաքրքրություն է ներկայացնում թե՛ քաղաքական, թե՛ գիտական առումներով: Դա պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրվող խնդիրը առնչվում է հարևան պետության պատմությանը, որն առաջնակարգ դեր է կատարել և կատարում է այն տարածաշրջանում, որին աշխարհագրական առումով պատկանում է նաև Հայաստանը:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Աշխատանքի նյութերը և տվյալները կարող են օգտագործվել XVII-XVIII դարերի Պարսկաստանի պատմության ուսումնասիրմանը և հայ-պարսկական հարաբերությունների պատմությանը նվիրված հատուկ դասընթացներում: Աշխատության եզրահանգումները կարող են օգտակար լինել պետական մարմինների համար վերլուծական նյութեր պատրաստելու, ինչպես նաև Միջին Արևելքում հայ-պարսկական հարաբերությունների որոշ հարցեր մշակելու տեսանկյունից: Այն կարող է օգտագործվել նաև գիտա-մանկավարժական ոլորտում ուսումնասիրություններ կատարելու համար:

6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱԲՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել է Երևանի պետական համալսարանի ընդհանուր պատմության ամբիոնում և Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնում: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրակացությունները շարադրված են ատենախոսի հրատարակած գիտական հոդվածներում և հիմնադրույթներում, ինչպես նաև ԳՄԻ գիտական նստաշրջաններում կարդացված զեկուցումներում և հրապարակած թեզերում: Թեման դասավանդվել է նաև ԳՄԻ Պատմաբանասիրական ֆակուլտետի պատմության բաժնում, որպես հատուկ դասընթաց:

Հեղինակի հրատարակած հոդվածների և թեզերի ցանկը ներկայացվում է սեղմագրի վերջում:

7. ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ:

Ատենախոսությունն ընդգրկում է XVII-XVIII դարերն ընկած ժամանակահատվածը: Նման պարբերացումը բացատրվում է նրանով, որ այս ժամանակահատվածում մեծ թվով նյութեր են ամփոփված հայկական աղբյուրներում, որոնք այսօր էլ մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Բացի այդ թեմայի ժամանակագրական շրջանակները առնչվում են Պարսկաստանի հզորացման, հայ-պարսկական

հարաբերությունների խորացման և պատմական մի շարք կարևոր իրադարձությունների /Սեֆյան տերության անկում, թուրք-պարսկական հակամարտություններ, միջցեղային բախումներ և այլն/ հետ, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց այժմեականությունը:

8.ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Սկզբնաղբյուրներ – Համեմատական և աղբյուրագիտական վերլուծության ժամանակ օգտագործվել են XVII-XVIII դարերի հայ պատմիչների երկերը, ինչպես նաև մի շարք ժամանակագրություններ, ուղեգրություններ ու վավերագրեր:

Ատենախոսության առաջին գլխի համար կարևոր են եղել հետևյալ սկզբնաղբյուրները՝ Առաքել Դավրիժեցու «Պատմությունը», Զաքարիա Ագուլեցու «Օրագրությունը» և Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ բ, Ղ.Ալիշանի «Հայապատում» աշխատությունը, Գրիգոր Դարանաղցու «Ժամանակագրությունը», «Դիվան հայոց պատմության» գիրք Ժ և Մատենադարանի N1496 ձեռագիրը:

Աշխատության երկրորդ գլխի համար կարևոր են հետևյալ սկզբնաղբյուրները՝ Աբրահամ Կրետացու «Պատմությունը», Աբրահամ Երևանցու «Պատմութիւն պատերազմացն» /1722-1736թթ./ աշխատությունը,« Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցւոց»-ը, Եսայի Հասան-Զալալյանի «Պատմություն Աղուանից», ինչպես նաև Ռ Տիտանյանի խմբագրությամբ լույս տեսած՝ «Հայկական աղբյուրները Աղա Մուհամմադ խանի Անդրկովկասյան արշավանքների մասին» ժողովածուն,Երևան,1981թ.:

Որպես աղբյուրներ օգտագործվել են նաև Պետրոս Դի Սարգիս Գիլանենցի «Ժամանակագրությունը», Եղիա Կարնեցու «Դիվանը» և Հակոբ Կարնեցու «Տեղեկագիրը»:

Վաղնջական ժամանակներից սկսած Պարսկաստանի պատմության հարցերը միշտ էլ գտնվել են պատմաբանների, միջազգայնագետների և համաշխարհային հասարակության ուշադրության կենտրոնում: Պարսկաստանի պատմության հարցերի ուսումնասիրման վերաբերյալ կազմակերպվել են միջազգային

գիտաժողովներ և նստաշրջաններ: Հարևան երկրի պատմության հարցերի լուսաբանմանը նվիրվել են մեծ թվով աշխատություններ, որոնք լուրջ ներդրում են իրանագիտության բնագավառում: Այս առումով օգտագործված մասնագիտական գրականությունը կարելի է բաժանել երեք մասի՝ հայկական, ռուսական /նախախորհրդային/ և արտասահմանյան:

Հարցի ուսումնասիրման գործում հատկապես մեծ ներդրում ունեն հայ պատմաբանները, որոնց աշխատություններում ուսումնասիրության առարկա են դարձել XVII-XVIII դարերի Պարսկաստանի պատմության առանցքային հարցերը:

Այս առումով մեծ կարևորություն է ներկայացնում Լ.Դանեղյանի «Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVIIդարի պատմության սկզբնաղբյուր» աշխատությունը,որի հիմնական նպատակն է Դավրիժեցու երկն ուսումնասիրել իրանագիտական տեսանկյունից :

Հեղինակը կարողացել է արժեվորել և գիտականորեն հիմնավորել Առաքել Դավրիժեցու արժանահավատ տեղեկությունները Պարսկաստանի XVII դարի պատմության վերաբերյալ: Պատմական փաստերի համադրմամբ Լ.Դանեղյանը ներկայացնում է պատմիչի հաղորդումների հավաստիության աստիճանը և այլ աղբյուրների հետ բաղդատելու միջոցով բացահայտում օտար աղբյուրներում տեղ գտած անճշտությունները:

Լ.Բաբայանի «Դրվագներ Հայաստանի XIV-XVIII-դարերի պատմագրության» աշխատությունում ուսումնասիրության հատուկ առարկա են դարձել XIV-XVIII դարերի հայ պատմիչների աշխատությունները, որն ուղղակի կապ ունի ուսումնասիրվող խնդրի հետ: Քննարկվող ժամանակաշրջանի հայ պատմագիրների երկերը հավաստի ու ստուգապատում աղբյուրներ են ինչպես Հայաստանի, այնպես էլ Պարսկաստանի և մյուս դրացի երկրների պատմության ուսումնասիրության համար: Աշխատության մեջ համակողմանի ու ամբողջական ձևով վեր է հանված XIV-XVIII դարերի հայ պատմագիրների պատմագիտական, հասարակական-քաղաքական ու գաղափարական հայացքները, ժամանակի պատմության վերարտադրման օբյեկտիվության աստիճանը և աղբյուրների արժանահավատությունը:

Իրանագիտության ուսումնասիրության բնագավառում նշանակալի ծառայություններ է մատուցել Վ.Բայբուրդյանը, որի աշխատանքները ամենայն

իրավամբ ամբողջացնում են հարևան երկրի նկատմամբ մեր ունեցած պատկերացումները: Պարսկաստանի պատմության անբաժանելի մասն է կազմում նաև պարսկահայ գաղթօջախը: Այս առումով աչքի է ընկնում հեղինակի « Армянская колония Новой Джульфы в XVII веке» ռուսերեն մենագրությունը, որի մեջ հանգամանորեն և մանրազնին կերպով մեկնաբանվում է պարսկահայ վաճառականների կատարած մեծ դերը Պարսկաստանի տնտեսության զարգացման գործում: Ներկայացված է Նոր Ջուղայի կառավարման համակարգը, նրա ունեցած արտոնությունները, ինչպես նաև երբեմնի հայաշատ ու հարուստ գաղթօջախի քայքայումն ու թուլացումը: Գիտական մեծ կարևորություն ունի Վ. Բայբուրդյանի «Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը17-րդ դարում» Թեհրան, 1996թ, աշխատությունը, որտեղ ցույց է տրված այն հիրավի անուրանալի առաջատար դերը, որ խաղացել են իրանահայ վաճառականները XVII դարի համաշխարհային առևտրում: Նույն հեղինակի մեկ այլ աշխատության մեջ «Իրանն այսօր», Երևան, 1996թ. համակողմանի տեղեկություններ են ամփոփված ժամանակակից Իրանի պատմության, տնտեսության, մշակույթի, պետական կառույցների, ինչպես նաև հայ-պարսկական հարաբերությունների վերաբերյալ:

Ռուս-պարսկական և հայ-պարսկական հարաբերություններին է անդրադարձել նաև Վ.Դիլոյանը «Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից» /XVIII դարի երկրորդ կես/ աշխատության մեջ: Հեղինակը աղբյուրների և արխիվային նյութի հիման վրա պարզաբանում է Պարսկաստանում և Ռուսաստանում տեղի ունեցող քաղաքական գործընթացը, որն անմիջականորեն անդրադառնում էր Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների վրա:

Քննարկվող ժամանակաշրջանը սերտորեն առնչվում է թուրք-պարսկական պատերազմների և նրա հետևանքների հետ: Այս տեսակետից հիշատակության է արժանի Հ.Նաջարյանի «Թուրք – իրանական հարաբերությունները XVI դ. ու XVIդ. առաջին կեսին և Հայաստանը» աշխատությունը, որի մեջ հայ ու օտար աղբյուրների լուսաբանմամբ պարզաբանվում են Պարսկաստանի, Թուրքիայի և Հայաստանի պատմության մի շարք հարցեր, որոնք բախտորոշ նշանակություն են ունեցել հայ և պարսիկ ժողովուրդների համար: Նույն հեղինակի «1639թ. թուրք-իրանական

հաշտության պայմանագիրը և Հայաստանը» աշխատության մեջ արտացոլված է թուրք-պարսկական պատերազմի ավարտը և Հայաստանի հերթական բաժանումը:

XVII-XVIII-րդ դարերի Պարսկաստանի պատմության հարցերին է անդրադարձել նաև Ս.Տեր-Ավետիսյանը,«Նադիր շահի արշավանքները:Ըստ Հակոբ Շամախեցու» Երևան, 1940թ., աշխատության մեջ, որտեղ ներկայացրել է Նադիր շահի արշավանքները և նրա կողմից իշխանության զավթումը: Լ.Տեր-Մկրտչյանը«Армения под властью Надир шаха », Մոսկվա, 1963թ., աշխատության մեջ ցույց է տվել Նադիրի քաղաքականության հետևանքները Հայաստանի համար, որոնք նա համարում է աղետաբեր: Նադիրի լայնածավալ արշավանքներին է անդրադարձել Ս.Քիշմիշևը,«Походы Надир шаха в Герат, Кандагар, Индию, и события в Персии после его смерти», Թիֆլիս, 1889թ. աշխատության մեջ մեկնաբանելով Նադիրի Աֆղանստան, Հնդկաստան կատարած արշավանքները պարզաբանում է նրա հաղթանակների պատճառները և հետևանքները Պարսկաստանի համար:

XVIII դարի Պարսկաստանի պատմության ուսումնասիրության ոլորտում խիստ կարևոր է Պ.Բուտկովի նյութերի ժողովածուն, որի մեջ մեզ հետաքրքրող հարցերի վերաբերյալ ամփոփված են արժանահավատ տեղեկություններ:

Ռուս պատմաբաններն անդրադարձել են նաև Պարսկաստանի տնտեսությանը, մշակույթին, ռուս-պարսկական հարաբերություններին, ինչպես նաև ներքաղաքական կացությանը:

Ուսումնասիրվող շրջանը, ինչպես նշվեց վերևում, հետազոտության առարկա է դարձել նաև արտասահմանյան պատմաբանների, միջազգայնագետների և արևելագետների կողմից: Լոկրուետի«Nadir Shah, a Gritical Study Mainiy upon Gontemporary Sources>> և Մալկոլմի<<Histoire de la Perse>> աշխատությունները նվիրված են Նադիր շահի ներքին ու արտաքին քաղաքականությանը, նրա կատարած նվաճումներին, ինչպես նաև երկրի ներքաղաքական կացությանը: Պարսկաստանի մղած ռազմական գործողություններին է նվիրված ֆրանսիացի պատմաբաններ Է.Լավիսսի և Ա.Ռամբոի<<Histoire ge'ne'rale du IVe sie'cle a` nos jours>> համատեղ աշխատությունը, որտեղ ներկայացված է Պարսկաստանի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև XIX դարն ընկած ժամանակահատվածը: Պարսկաստանի պատմության հարցերին է նվիրված Ռ.Մանի << Estat de la Perse en 1660>> և

Ժ.Շարդենի <<Voyages en Perse>> աշխատությունները, որոնք հրապարակվել են XIX դարի վերջերին Փարիզում և առ այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը և աղբյուրագիտական արժեքը

:

9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, վերջաբանից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված է թեմայի արդիականությունն ու նշանակությունը, նպատակն ու խնդիրները, ինչպես նաև տրված է հարցի պատմագրությունը:

Առաջին գլուխ: «Պարսկաստանի սոցիալ – տնտեսական ու քաղաքական պատմության հարցերը XVII դարի հայ պատմիչների լուսաբանմամբ»: Այս գլուխը բաժանվել է երեք ենթաբաժինների:

Առաջին ենթաբաժնում «Պարսկաստանի ներքին ու արտաքին դրությունը XVII դարի առաջին կեսին» ներկայացված են երկրի ներքին ու արտաքին կացությունը, տնտեսական հարաբերությունները, սոցիալ-տնտեսական կառուցվածքը, կառավարման համակարգը ըստ հայ պատմիչների:

Սեֆյանների կառավարման շրջանում երկրում գոյություն ուներ քաղաքական մասնատվածություն, որը հնարավոր չեղավ լիովին հաղթահարել:

XVII դարում բուռն կերպով աշխուժանում էր Պարսկաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքը: Դեռևս պահպանվում էին նահապետական – տոհմատիրական հարաբերությունները: Բնակչության 1/3-ը քոչվոր կյանք էր վարում: Պահպանվում էին հողի ֆեոդալական սեփականության ձևերը: Առաքել Դավրիժեցու երկում ուշագրավ տեղեկություններ կան նաև չոբանբեկի կոչվող հարկի մասին, որը գանձվում էր մանր եղջյուրավոր անասունների համար[1]: Այդ հարկը բավականին ծանր է եղել և Շահ-Աբասը Ի-ը (1587-1629) ստիպված վերացրել է այն: Դատական գործերը իրականացրել է դրվանբեկին, որը եղել է գլխավոր քննող ու վճռող անձ: Այս բաժնում տեղեկություններ կան նաև երկրի վարչական կառուցվածքի մասին:

[1] Տես Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ 1896թ., էջ 171-177:

Պարսկաստանի նահանգները ղեկավարվում էին նահանգապետների կամ բեկլարբեկների կողմից:

XVII դարում վերելք էր ապրում Պարսկաստանի ներքին ու արտաքին առևտուրը: Մեծ տեղ է զբաղեցրել բանկարժեք քարերի առևտուրը, որոնց մասին դարձյալ կարևոր տեղեկություններ է հաղորդում Առաքել Դավրիժեցին[1]: Տվյալ ժամանակաշրջանում աշխուժանում էին ռուս - պարսկական հարաբերությունները, որն արտահայտվում էր դեսպանների փոխանակմամբ: Երկրում ձեռնարկվում էին միջոցառումներ առևտրական ճանապարհների անվտանգության ապահովման և շինարարական աշխատանքների իրականացման համար: Կառուցվեցին ճանապարհներ, կամուրջներ, կարավանատներ և այլն:

Քաղաքների զարգացման համար հատկանշական էր արհեստների զարգացումը: Պատմագիրը նշում է մի շարք քաղաքների մասին (Սպահան, Թավրիզ, Արդաբիլ, Ղազվին և այլն) որոնք կարևոր դեր են կատարել ներքաղաքական կյանքում: Հատկապես գովեստով է խոսում Սպահանի մասին, այն անվանելով՝ ամուր և բազմամարդ:

Զաքարիա Սարկավագը տվյալներ է հաղորդում Թավրիզի մասին, որն ունեցել է ավելի քան 600 հազար բնակիչ: XVII դարում Պարսկաստանում գոյություն է ունեցել համաքաղաքային կառավարում, ինքնակառավարում: Նոր Ջուղայի բնակիչները Շահ Աբասից իրավունք ստացան ընտրելու իրենց քալանթարին (քաղաքապետին): Զաքարիայի աշխատությունը մեծաքանակ ստուգապատում նյութեր է պարունակում Պարսկաստանի սոցիալ-տնտեսական կյանքի տարբեր բնագավառների մասին: Երկրում տեղի ունեցած առևտրի մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Զաքարիա Ագուլեցին, որի «Օրագրությունը» վաճառականների համար ունեցել է մեծ նշանակություն: Նկարագրում է առևտրական ուղիները, մաքսերի չափերը, իջևանատները և այլն:

Առաջին գլխի երկրորդ ենթաբաժինը նվիրված է «Շահ Աբաս Ի-ի ներքին ու արտաքին քաղաքականությանը»: Այս ենթաբաժնում ցույց են տրված ներքին ու արտաքին այն նախադրյալները, որոնց օգնությամբ Շահ Աբասը կարողացավ ոտքի կանգնեցնել Սեֆյան տերությունը: Առաջին հերթին կարևորվում են նրա

[1] Նույն տեղում, էջ 586-596:

դիվանագիտական ձեռնարկումները: Շահ Աբասը 1590թ. Օսմանյան կայսրության հետ կնքեց պայմանագիր, որով վերջինիս զիջեց մի շարք տարածքներ: Նվաստացուցիչ այս պայմանագիրը շահն օգտագործեց երկրի ներսում կենտրոնախույս ուժերին զսպելու և պետական մեքենան ամրապնդելու համար: Բայց Շահ Աբասը նախահարձակ եղավ նախքան միջոցառումների ամբողջական ավարտումը: Դրան նպաստեց Օսմանյան կայսրությունում սկսված ջալալիների շարժումը, որը քայքայում էր օսմանցիների ուժերը: Ներքին քաղաքականության ոլորտում Շահ Աբասը ձգտում էր ստեղծել մեկ միասնական հզոր տերություն: Նա ամեն ջանք գործադրում էր երկրի արտադրողական ուժերի զարգացման համար:

Շահ Աբաս Ի-ի գործունեության, նրա վարած քաղաքականության մասին արժանահավատ տեղեկություններ է հաղորդում Առաքել Դավրիժեցին, որը շատ ճիշտ է ընկալել շահի քաղաքականության էությունը: Անխնա քննադատության ենթարկելով պարսից շահին ու արքունիքին, հայրենասեր պատմիչը միաժամանակ մեղադրում է հայ հոգևոր և աշխարհիկ այն առաջնորդներին, ովքեր կամովին նպաստում էին նման քաղաքականությանը: Համարելով շահին «աշխարհների ավերիչ», «քրիստոնյաների վատնիչ» Դավրիժեցին սրտի անհուն կսկիծով է նկարագրում Ջուղայի բռնագաղթը /1604թ./: Նկարագրելով Շահ Աբասի հայամետ քաղաքականությունը, պատմիչը պարզաբանում է նաև դրան դրդող հանգամանքները:

Արտաքին քաղաքականության ոլորտում Շահ Աբասը համբերատար կերպով պատրաստվում էր : Նա ձեռնամուխ եղավ զինված ուժերի վերակառուցմանը, որի մեջ ներգրավեց եվրոպական ռազմական մասնագետներին:

Զաքարիա Սարկավագի աշխատության մեջ մեծ թիվ են կազմում Շահ Աբասին նվիրված զրույցներն ու երգերը, որտեղ բռնակալը բավականին համակրելի գծերով է ներկայացված: Պատմիչը հավատացել է այդ հեքիաթներին և ինքն էլ իր հերթին գունազարդել է դրանք:

Առաջին գլխի հաջորդ ենթաբաժինը « Պարսկաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կացությունը XVII դարի երկրորդ կեսին» ընդգրկում է Շահ Աբասի մահից հետո Պարսկաստանում ստեղծված սոցիալ-տնտեսական ու քաղաքական

դրությունը, ինչպես նաև հետպատերազմյան ժամանակաշրջանը: 1639թ. հաշտության պայմանագիրը թուրք-պարսկական հարաբերությունների նոր փուլի սկիզբը հանդիսացավ: Հայ պատմիչները բարձր են գնահատել այդ խաղաղությունը: Դրանից հետո Պարսկաստանում բուռն կերպով աշխուժացան ֆեոդալական հարաբերությունները: Վերելք ապրեցին քաղաքները, զարգացան արհեստն ու առևտուրը

Հայ պատմիչները եթե XVII դարի առաջին քառորդը ներկայացնում են որպես Արևելյան Հայաստանի ավերման պատմություն, ապա նույն դարի երկրորդ ու երրորդ քառորդները բնութագրում են որպես նրա նորոգման պատմություն:

Պետք է նշել, որ արդեն սկսվել էր Սեֆյան տերության թուլացումը, որն արտահայտվում էր և՝ ներքին և՝ արտաքին ոլորտներում: Սեֆյան տերության թուլացման հիմնական պատճառներն էին ֆեոդալական ճնշման սաստկացումը, ներքին հակասությունների սրումը և հպատակեցված ժողովուրդների ազգային ազատագրական պայքարը: Այս գործընթացը առանձնապես արագացավ XVII դարի վերջին ու XVIIIդարի սկզբին:

Այս գլխում օգտագործված աղբյուրների ու գրականության հիման վրա եզրակացություն է արվել այն մասին, որ Պարսկաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացումը միանշանակ չի եղել և ընթացել է վերելքներով ու վայրէջքներով, միաժամանակ զուգահեռ եզրակացություն է արվել, որ Պարսկաստանի պատմության հարցերի լուսաբանման գործում խիստ կարևոր են XVII դարի հայկական աղբյուրների տեղեկությունները, որոնք հետաքրքիր մեկնաբանություններ են տալիս Պարսկաստանի առանցքային հարցերի մասին:

Երկրորդ գլուխ՝ «Պարսկաստանի ներքին ու արտաքին դրությունըXVIII դարում» Ունի երեք ենթաբաժին, որոնցից առաջինը կրում է «Պարսկաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը XVIII դարի առաջին քառորդին», իսկ երկրորդը՝ « Նադիր շահի ներքին ու արտաքին քաղաքականությունըդրությունը » վերնագրերը:

Այս գլխի առաջին ենթաբաժնում ներկայացված է Պարսկաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կացությունը, որն առաջին հերթին հիմնված են հայկական աղբյուրների հաղորդումների վրա: Հատկապես այս գլխում կարևորվում է

Խաչատուր Զուղայեցու «Պատմութիւն Պարսից» աշխատությունը, որի նյութը շարադրելիս պատմիչն օգտվել է հայկական ու պարսկական աղբյուրներից: Պատմագիրը բացահայտում է Շահ Աբասի խորամանկ քաղաքականությունը, նրան համարում « օձն դարանակալ և խորամանկ», որն արտաքուստ հայերին բարեկամ էր ձևանում, իսկ ներքուստ դավեր էր նյութում հայության դեմ:

Հայ պատմիչները /Զաքարիա Սարկավագ, Գրիգոր Դարանաղցի/ ներկայացնում են Պարսկաստանի ռազմավարական նպատակները և հիմնավորում պատճառա-հետևանքային կապերը:

Սակայն XVIIIդարի երկրի տնտեսական առաջընթացը կասեցվեց և Պարսկաստանը հերթական անգամ ներքաշվեց տնտեսական ճգնաժամի մեջ: Քաղաքական դրությունը նույնպես դարձավ անկայուն:

Դեռևս Սուլեյման շահի օրոք /1666-1694թթ./ արդեն ակնհայտ էր երկրի քաղաքական թուլացումը, իսկ Սուլթան Հուսեյնի օրոք /1694-1722թթ./ այդ վիճակը էլ ավելի ծանրացավ: Կրճատվեցին պետության եկամուտները, նվազեց արտաքին առևտուրը:

Մի շարք վայրերում տեղի ունեցան ապստամբություններ, որոնք ցնցեցին պետության քաղաքական հիմքերը: Սեֆյան արքունիքում տիրում էր կատարյալ անիշխանություն: Չարաշահումները հասնում էին աննկարագրելի չափերի: Այս մասին տեղեկություններ է հաղորդում Եսայի Հասան-Զալալյանը: Նկարագրած իրադարձություններին նա եղել է ոչ միայն ականատես, այլև ակտիվ մասնակից: Պատմիչը համառոտ ներկայացնում է պարսից պատմությունը և հատկապես կանգ է առնում XVIII դարի առաջին քառորդի իրադարձություններին, բացահայտում պարսից արքունիքի ներքին ու արտաքին քաղաքականությունը, վերլուծում դրանց հետևանքները: Հոգևորական պատմիչը մեկնաբանում է նաև Սեֆյան հարստության անկման պատճառները, համարելով այն օրինաչափ երևույթ:

Սուլթան Հուսեյնի որդին՝ Թահմասպը /1722-1732թթ./, իրեն շահ հռչակելով կոչ էր անում ժողովրդին համախմբվելու իր շուրջը: Շահ Թահմասպի մասին մեզ տեղեկություններ է հաղորդում Աբրահամ Երևանցին, որն իր աշխատության մեջ անդրադառնում է պարսկա-թուրքական, պարսկա-աֆղանական և աֆղանա-թուրքական հարաբերություններին, որոնք ներկայացված են հանգամանորեն և

հիմնավորված: Մեծ տեղ է տրվում քաղաքական իրադարձությունների, ռազմական գործողությունների արտացոլմանը: Այս շրջանում է, որ Շահ Թահմասպի ու Դավիթ Բեկի միջև հաստատվում է զինակցություն, որն ուղղված էր Օսմանյան Թուրքիայի դեմ: Աբրահամ Երևանցին Սեֆյան հարստության անկման պատճառը համարում է աֆղանների ապստամբությունը, որի նկարագրումով էլ սկսում է իր շարադրանքը:

Երկրորդ գլխի երկրորդ ենթաբաժնում ներկայացված է Նադիր շահի կառավարման ժամանակաշրջանը /1736-1747/: Աղբյուրների և փաստական տվյալների հիման վրա ներկայացված են Նադիրի ռազմական հաջողությունները, դիվանագիտական քայլերը, զորավարական ունակությունները: Այս մասին հատկապես կարևոր տեղեկություններ են հաղորդում Աբրահամ Երևանցին ու Աբրահամ Կրետացին: Արժեքավոր տեղեկություններ կան Եղվարդի ճակատամարտի մասին /1735/: Աբրահամ Կրետացին անմիջական առնչություններ է ունեցել Նադիրի հետ և ականատեսի վկայությամբ ներկայացրել է այդ ամենը: Կաթողիկոսը մասնակցել է նաև Մուղանի կուրուլթային և նկարագրում է հանդիսավոր արարողությունները[1]: Շատ անգամ Նադիրը ընդառաջել է կաթողիկոսի խնդրանքներին, քանզի շատ լավ գիտակցել է եկեղեցու ունեցած դերը հայ ժողովրդի կյանքում: Նադիրի թագադրումով ավարտվում է Սեֆյան իշխանությունը և սկսվում է աֆշարների հարստության շրջանը:

Այս բաժնում տրվում են նաև Նադիր շահի նվաճումները, երբ պետության սահմանները հասան Եփրատից մինչև Ինդոս: Նադիրն ունեցել է առաջադիմական գաղափարներ և ձգտել է ստեղծել մեկ ընդհանուր կրոն, որը վերջ էր տալու կրոնական խտրականություններին: Մինչև անգամ նա կրճատեց հոգևորականների եկամուտները, որը չտեսնված քայլ էր մահմեդական երկրների կյանքում: Նադիրի գործունեությանը անդրադարձել է նաև Խաչատուր Զուղայեցին, որը պարզաբանում է Նադիրի քաղաքականության հետևանքները և արդյունքները:

Նադիրի սպանությունից հետո Պարսկաստանում դրությունը կրկին դարձավ անկայուն:

Այս բաժնում քննարկվել է նաև հայոց եկեղեցու և պարսից արքունիքի փոխհարաբերությունների հարցը:

[1] Տես Աբրահամ Կրետացի, Պատմություն, Երևան 1973թ., էջ 98-105:

Աշխատության երկրորդ գլուխն ավարտվում է «Պարսկաստանի ներքին ու արտաքին դրությունը XVIII դարի երկրորդ կեսին» ենթաբաժնով, որտեղ ներկայացված է երկրի քաղաքական ու տնտեսական մասնատվածությունը, ֆեոդալական երկպառակտչական կռիվները, ինչպես նաև ներքաղաքական ծանր կացությունը: Ներքաղաքական պայքարի հետևանքով իշխանության գլուխ անցավ Քերիմ Խան Զենդը, որին հայկական աղբյուրները ներկայացնում են որպես խելացի, արդարամիտ ու համեստ մի մարդու, որն ամեն ինչ անում էր երկրի բարգավաճման համար: Անցնելով իշխանության գլուխ նա իրեն անվանեց «վեքիլ» /պետության լիազոր/: Մայրաքաղաք ընտրեց Շիրազը:

Քերիմ խանի /1750-1779թթ./ կառավարման տարիներին երկրում դադարեցին արյունահեղ կռիվները, հստակեցվեց հարկային համակարգը, մտցվեցին կայուն գներ պարենային ապրանքների համար: Իրականացվեցին շինարարական աշխատանքներ, վերելք ապրեցին արհեստները:

Խաչատուր Զուղայեցին մանրամասն նկարագրում է Քերիմ խանի ժամանակաշրջանը՝ տալով ճշգրիտ տեղեկություններ[1]: Արտացոլված են երկրում ծավալված ռազմական գործողությունները, ժողովրդական ապստամբությունները, ներքին ու արտաքին դրությունը:

Այս բաժնում տրված է նաև Պարսկաստանի դրությունը Քերիմ խանի մահից հետո: Սկիզբ առան երկպառակտչական կռիվները, սաստկացան հարկերը: Այդ պայքարում հաղթանակ տարավ ղաջար ցեղի առաջնորդ Աղա Մուհամմադ խանը, որը ծայրահեղ դաժան մեթոդներով ամրապնդեց իր իշխանությունը: 1795թ. արշավանք ձեռնարկեց Շիրվան ու Վրաստան, որոնք համարում էր Պարսկաստանի անբաժանելի մասերը: Պարսիկները գրավեցին Թիֆլիսը և անխնա ավերածության ենթարկեցին: Աղա Մուհամմադ խանը սկիզբ դրեց ղաջարական դինաստիային /1796-1925թթ./: Անդրկովկասյան արշավանքները իրենց արտացոլումն են գտել նաև հայկական աղբյուրներում, որոնք ճշմարտացիորեն ներկայացնում են Հայաստանում և Պարսկաստանում տիրող ռազմա-քաղաքական իրավիճակը և արտացոլում են այդ արշավանքների հետևանքները:

[1] Տես Խաչատուր Զուղայեցի, Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ 1905, էջ 325-326:

XVIII դարի վերջին Պարսկաստանը կրկին ապրում էր քաղաքական ու տնտեսական ծանր ճգնաժամ, բայց դարձյալ փորձում էր վերականգնել իր երբեմնի հզորությունը:

Այս գլխում օգտագործված աղբյուրների ու գրականության հիման վրա եզրակացություններ են արվել Պարսկաստանի XVIII դարի ռազմական դրության մասին: Ներկայացված են Սեֆյան հարստության անկման պատճառները, Նադիր շահի հզորացման նախադրյալները, ինչպես նաև Քերիմ խանի կառավարման խաղաղ շրջանը:

Հարկ է նշել, որ ամենայն իրավամբ XVII-XVIII դարերի հայկական աղբյուրների հաղորդումներն առանձնանում են հարևան երկրի պատմության ուսումնասիրության բնագավառում և լիարժեք կերպով նպաստում են պատմական իրադարձությունների հիմնավորմանը:

Եզրափակում: Կատարված ուսումնասիրության հիման վրա եզրակացություններ են արվել XVII-XVIII դարերի Պարսկաստանի ներքին ու արտաքին դրության մասին և ցույց է տվել հայկական աղբյուրների հաղորդումների տեղն ու նշանակությունը այդ ոլորտի ուսումնասիրության մեջ: Մասնավորապես նշվում է հայ-պարսկական հարաբերությունների բնույթը: Պարսկաստանի պատմության ուսումնասիրության ոլորտում հայկական աղբյուրներն ունեն յուրահատուկ կարևորություն, որն արտահայտվում է հետևյալ մոտեցումներում.

Առաջին. դրանք աչքի են ընկնում իրենց արժանահավատությամբ և նյութերի առատությամբ:

Երկրորդ. Դրանք ներկայացված են հայ-պարսկական քաղաքական հարաբերությունների հետնախորքի վրա: Հայ պատմիչներն անդրադարձել են ոչ միայն երկրի ռազմա-քաղաքական այլև՝ սոցիալ-տնտեսական դրությանը:

Երրորդ. Հայկական աղբյուրների դերը Պարսկաստանի պատմության լուսաբանման հարցում չափազանց մեծ է, քանզի դրանք հիմնականում ականատեսների և նկարագրվող իրադարձությունների մասնակիցների վկայություններ են և հաղորդում են տարաբնույթ տեղեկություններ: Եզրակացություն է արվել, որ չնայած առավելություններին հայկական աղբյուրներն ունեն մի շարք թերություններ, որոնք ամենևին չեն ազդում .նրանց գիտական արժեքի վրա:

Հայկական աղբյուրներին հատուկ են միջնադարյան պատմագրությանը յուրահատուկ թերությունները: Շարադրանքի թելը բազմիցս կտրվում է երկարաշունչ դատողություններով, մեծ տեղ է հատկացվում դավանաբանական հարցերին, հաճախ հեղինակների գնահատականները տառապում են միակողմանիությամբ: Մի շարք պատմիչների մոտ բացակայում է քննադատական վերաբերմունքը:

XVII-XVIII դարերի հայ պատմիչների երկերը այսօր էլ շարունակում են մնալ իրանագիտության ուշադրության կենտրոնում և դրանք նպաստում են պարզաբանելու, վեր հանելու և ճշգրիտ լուսաբանելու Պարսկաստանի պատմության բազում չլուծված հարցեր:

Ատենախոսության թեմայով հեղինակը հրատարակել է .

1. Պարսկաստանի17-18I-րդ դարերի պատմության առանցքային հարցերը հայ պատմիչների երկերում, Հանրապետական գիտական նստաշրջան նվիրված երկրաշարժի տասնամյա տարելիցին, Զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 1999, էջ 9-10:
2. Շահ Աբասի արշավանքների արտացոլումը Առաքել Դավրիժեցու երկում, ԵՊՀ-ի 80-ամյակին նվիրված Շիրակի մարզի գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2000թ., էջ 128-131:
3. Նադիր շահի ներքին ու արտաքին քաղաքականության գնահատման շուրջ, Գյումրու «Պրոգրես» համալսարանի հոբելյանական գիտաժողովի գիտական նյութերի ժողովածու, Երևան, 2000թ., էջ 85-91:
4. Առաքել Դավրիժեցին Շահ Աբաս I-ի և հայոց կաթողիկոսների փոխհարաբերությունների մասին, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ գիտական աշխատություններ, հատոր III, Գյումրի 2000թ., էջ 189-191
5. Հայ-իրանական հարաբերությունները XVIII դարի 20-30-ական թվականներին, /ըստ հայկական սկզբնաղբյուրների/ ՀՀ ԿԳՆ ԳՄԻ Զեկուցումների հիմնադրույթներ, հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված քրիստոնեության 1700-ամյակին, Երևան, 2001թ., էջ 14-16:
6. Արժանահավատ տվյալներ 1795 թ. Թիֆլիսի գրավման հետևանքների մասին, ՀՀ ԿԳՆ ԳՄԻ Զեկուցումների հիմնադրույթներ, հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված քրիստոնեության 1700-ամյակին, Երևան, 2001թ, էջ 26-28:

ГАСПАРЯН АРШАВИР АРАМОВИЧ

ВОПРОСЫ ИСТОРИИ ПЕРСИИ XVII-XVIII ВЕКОВ В ТРУДАХ АРМЯНСКИХ ИСТОРИКОВ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00 02 "Всеобщая история".

Защита состоится 7 октября 2002г. в 14 часов по адресу 375019, г.Ереван, просп. Маршала Баграмяна, 24г, Институт Востоковедения НАН РА.

РЕЗЮМЕ

В трудах армянских историков мы часто сталкиваемся с очень ценными сведениями по истории Персии, освещающими также и историю развития армяно-персидских отношений. Они рассматривается на фоне взаимоотношений двух стран и получают весьма актуальное звучание, чем и обусловлен выбор данной темы. С этой точки зрения особенно выделяются труды армянских историков II- III вв.., которые освещают основные вопросы политической и хозяйственной истории Персии данного периода. Самые важные события того времени не могли остаться незамеченными армянскими историками, которые пытались достаточно беспристрастно прокомментировать их. Научная ценность этих сведений обусловлена тем, что армянские историки, о трудах которых идет речь, были свидетелями и непосредственными участниками этих событий. И не случайно эти источники находятся в центре внимания и персидской исторической науки.

Среди них особенно выделяется "История" Аракела Даврижеци, как наиболее достоверный армянский первоисточник по истории Персии. Период истории Персии, который представлен А.Даврижеци и является предметом нашего исследования, богат важными событиями. Армения в очередной раз стала ареной военных действий между Персией и Османской империей, которые в этом противоборстве стремились разрешить вопрос владычества на Ближнем Востоке. Сведения Аракела Даврижеци – это взгляд современника на место Армении и армяно-персидских отношений в данных процессах.

В настоящее время, когда армяно-персидские отношения переживают неуклонное развитие, естественно, возрастает интерес армянского народа к истории соседней страны. В этом смысле армянские источники приобретают особую значимость, так как они являются подчас единственными фактическими материалами по истории взаимоотношений двух соседних народов.

Основная цель данной работы изучить внешнее и внутреннее положение Персии в указанный период, исходя из сведений и оценок содержащихся в трудах армянских историков - современников событий.

Методологической основой диссертации является сравнительно-исторический метод и анализ материалов содержащихся в указанных трудах.

Научная новизна работы заключается в том, что впервые на базе армянских источников становится предметом исследования история Персии, рассматриваемая в аспекте армяно-персидских отношений II- III вв.

Практическая значимость диссертации заключается и в том, что все материалы можно использовать в специальных курсах по армяно-персидским отношениям и по истории Персии.

Основные тезисы диссертации изложены в статьях и докладах, представленных на научных сессиях и конференциях, проведенных в Гюмрийском государственном педагогическом институте.

Диссертация состоит из предисловия, двух глав, заключения, списка использованных источников и литературы.

В Предисловии обоснованы актуальность, значимость, цель и задачи диссертации, а также историография вопроса.

В первой главе "Социально-экономические и политические вопросы истории Персии в освещении армянских историков II века" освещается внешнее и внутреннее положение двух соседних стран, основание династии Сефевидов, вопросы государственного управления и т.д. Подробно исследована внутренняя и внешняя политика Шаха Аббаса (1587-1629). Показано, что полноценное изучение этого вопроса без армянских источников не представляется возможным.

Во второй главе "Внутреннее и внешнее положение Персии во второй половине II- III вв." представлен период упадка и подъема Персии, внутриполитическое состояние, внутренняя и внешняя политика Шаха Надира (1736-1747). Для изучения этой проблемы особое значение имеет труд Хачатура Джугаеци "История Персии".

В этой главе даны причины падения династии Сефевидов. Одновременно освещен период правления Керим-хана-Зенда(1750-1779), когда положение страны несколько стабилизировалось. Но после того, как хан Ага Мугаммед пришел к власти, положение страны резко ухудшилось. Армянские источники единодушно утверждают, что после убийства хана Ага Мугаммеда, Персия облегченно вздохнула, так как он вел страну, по их мнению, к гибели.

На основании проведенного исследования в Заключении диссертации сделаны выводы по основным рассмотренным вопросам, показано их значение для современной исторической науки и всемирной истории.

ARSHAVIR GASPARIAN

The Problems of the History of Persia in the Works of the Armenian Historians of the 17th –18th Genturies.